

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ, ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ, ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ
հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին»
օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ,
«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ
հոդվածների դրույթներով, համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել 2023 թվականի տեղական տուրքերի դրույթաչափերը՝
համաձայն Հավելված N 1-ի
2. Սահմանել 2023 թվականի տեղական վճարների դրույթաչափերը՝
համաձայն Հավելված N 2-ի
3. Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադրողական և
նախադրողական կրթություն մատուցող կազմակերպությունների
ծառայություններից օգտվող համայնքի բնակչության նշված
սոցիալական խմբերի համար սահմանել հետևյալ արտոնությունները

1) Երկկողմանի ծնողագուրկ, հաշմանդամություն ունեցող երեխաներին,
մանկատան սաներին, հաշմանդամության առաջին կարգ ունեցող ծնողների
երեխաներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության
ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների
/ազատամարտիկների/ երեխաներին ազատել վարձավճարից:

2) Արտադրողական կրթություն մատուցող կազմակերպությունների
ծառայություններից օգտվող միակողմանի ծնողագուրկ, բազմազավակ (չորս և
ավելի) ընտանիքների, նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի
երեխաների համար սահմանել արտոնություն 50%-ի չափով:

3) Մանկապարտեզների սաների հաճախումների բացակայությունների
դեպքում, բացակայած օրերի համար վարձավճար չի գանձվում, եթե ծնողը

ներկայացրել է բժշկի կողմից տրված տեղեկանք երեխայի հիվանդության վերաբերյալ:

4. Հավելված 1-ի 16-րդ կետով սահմանված դրույքաչափը Գավառ համայնքում հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:
5. Հավելված 1-ի 9-րդ կետի 1) և 2) մասերի բ, գ, դ, ե, զ ենթակետերով սահմանված նվազագույն դրույքաչափերի նկատմամբ Գավառ քաղաքում կիրառել 0.5, իսկ մյուս 11 բնակավայրերում 0.3 գործակից:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 01-ից ծագող հարաբերությունների վրա: